ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հուլիսի 1-ի, ժամը 14:00-ի նիստի
N 13 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 13.05.2022, N 87 (7753)) համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հայկ Արթուրի Քամալյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի մայիսի 13-ի N 87 (7753) համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի մայիսի 25-ին ռեկտորին դիմում է ներկայացրել բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հայկ Արթուրի Քամալյանը:** Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Հ.Ա.Քամալյանը ծնվել է 1988 թվականի հուլիսի 7-ին Իջևան քաղաքում: 2005-2009 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում՝ «Մաթեմատիկա, ինֆորմատիկա և ֆիզիկա» մասնագիտությամբ և նրան շնորհվել է բակալավրի աստիճան: 2009-2011 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ և նրան շնորհվել է մագիստրոսի աստիճան:

Հ.Ա.Քամալյանը 2014 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2020 թվականին ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Մաթեմատիկա» մասնագիտությամբ:

Հ.Ա.Քամալյանը հրատարակել է 7 գիտական հոդված (այդ թվում 5-ը՝ համահեղինակությամբ, որից 1-ը՝ միջազգային ամսագրում):

Հ.Ա.Քամալյանը 2013-2016 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բնագիտական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնում որպես ասիստենտ: 2016 թվականի հոկտեմբերի 3-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում. նախ՝ ասիստենտ, իսկ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից՝ դոցենտ: Զեկուցողը նշեց նաև, որ Հ.Ա.Քամալյանը 2013-2014 թթ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում աշխատել է ժամավճարային կարգով, իսկ 2015-2016 թթ.՝ համատեղության կարգով: 2021 թվականից Հ.Ա.Քամալյանը «Քվանտ» վարժարանի միջազգային բակալավրիատ դիպլոմա ծրագրի մաթեմատիկայի ուսուցիչ է:

Տիրապետում է հայերենին, ռուսերենին և անգլերենին:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի 2022 թվականի հունիսի 17-ի նիստում (արձանագրություն N 8) քննարկվել է բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Հյակ Արթուրի Քամալյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր,

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Հ.Ա.Քամալյանը ներկայացրել է բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման ռազմավարության տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել ամբիոնի դոցենտներ Ա.Ն.Հայրապետյանը և Հ.Հ.Մկրտչյանը: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնը երաշխավորել է Հ.Ա.Քամալյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի հունիսի 23-ի նիստում (արձանագրություն N 10), որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հայկ Արթուրի Քամալյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողից հետո Հայկ Արթուրի Քամալյանը ներկայացրեց բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Դ.Ն.Հախվերդյանը, դոցենտներ Թ.Մ.Մկրտչյանը, Ա.Վ.Գրիգորյանը, Ա.Մ.Քթոյանը, Կ.Պ.Պետրոսյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հայկ Արթուրի Քամալյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 35-րդ կետը, բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 46, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հայկ Արթուրի Քամալյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան